ՀՀ ԳԱԱ Հ.Ր. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՅՎԱԶՅԱՆ

«Լռություն» ֆենոմենի լեզվամշակութային դրսևորումները քաղաքական խոսույթում (անգլերեն և հայերեն նյութի հիման վրա)

Ժ. 02.02 – «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Լ.Գ. Բրուտյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ. Գ. Համբարձումյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա.Ս. Աբրահամյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհաննես Թումանյանի
անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. փետրվարի 5-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորիչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. դեկտեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտքարտուղար բանաիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ն.Մ.
Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է քաղաքական խոսույթում «լռություն» ֆենոմենի նկատմամբ համակարգված մոտեցումների ուսումնասիրության կարևորությամբ, այդ թվում՝ լռության՝ որպես արտալեզվական հաղորդակցային նշանի և նույն երևույթը որպես լեզվական տիրույթում դրսևորվող իրողություն տարորոշելու անհրաժեշտությամբ, որն էլ իր հերթին ենթադրում է ինչպես նշանագիտական, այնպես էլ իմաստաշարահյուսական ու լեզվագործաբանական գործիքակազմի համալիր կիրարկում՝ համապատասխան տիրույթներում քննարկվող երևույթի բազմակողմանի քննությունն իրականացնելու համար:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է «լռության» նշանագիտական, լեզվագործաբանական և իմաստաշարահյուսական առանձնահատկությունների բացորոշումն ու որոշարկումը քաղաքական խոսույթում, որի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1. տարորոշել լեզվագործաբանական գրականության մեջ առաջարկվող «լռության» գործառույթները՝ հիմք ընդունելով դրանցում առկա հաղորդակցային դիտավորությունը, տարբերակել «լռություն» և «լռել» եզրերը,
2. դասակարգել հաղորդակցային լռության ընդհանուր դրսևորումները՝ ըստ հաղորդողի և հաղորդակցի՝

հաշվի առնելով նաև վերջինիս լռեցնելու հնարավորությունները,

3. ցույց տալ «լռության»՝ որպես արտալեզվական նշանի բազմաշերտայնությունը քաղաքական խոսույթում՝ առաջարկելով որոշակի լեզվանշանագիտական մոտեցում՝ դրանք բացորոշելու և դրանց միջև առկա փոխհարաբերությունները պարզելու համար,
4. որոշարկել «լռության»՝ որպես ծածկասույթի դրսևորման հնարավորությունը քաղաքական խոսույթի տեքստային մակարդակում՝ լեզվական նյութի ծավալման երեք՝ իմաստային, շարահյուսական և գործաբանական չափումներում:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ առաջարկվում է քաղաքական խոսույթում «լռության» հաղորդակցային նպատակը բացորոշելու համար կիրարկել նշանային շերտերն առանձնացնելու և դրանց միջև առկա հարաբերությունները որոշարկելու մեթոդը, իսկ տեքստային մակարդակում երևույթը քննել լեզվական նշանի ծավալման երեք հարթություններում՝ խնդիրն ուսումնասիրելով իմաստաբանության, շարահյուսության և գործաբանության դիտանկյուններից: Բացի այդ, առաջին անգամ փորձ է արվում ֆիզիկական բռնությունը վերլուծել որպես հաղորդակցային միջոց քաղաքական խոսույթում, որը հաճախ գործածվում է ինչպես որոշակի բանի մասին լռելու, այնպես էլ քաղաքական հակառակորդին լռեցնելու նպատակով:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակությունը «լռությունն»

ֆենոմենի բազմահայեցակարգային վերլուծությունն է լեզվական նյութի ծավալման երեք հարթություններում՝ նշանագիտական, իմաստաշարահյուսական և գործաբանական: Փորձ է արվում ցույց տալ մարդակենտրոն հարացույցի փուլարկման ծիրում քննարկվող խնդրի տեսական հիմքերը, ինչպես նաև լեզվաբանական մի շարք արդի միջգիտակարգերում դրա ուսումնասիրման հնարավորությունները: Աշխատանքը կարևորվում է նաև գործնական նշանակությամբ, քանի որ մշակվում են քաղաքական տեքստերում լռության առնչվող երևույթների վերլուծության որոշակի մոտեցումներ, որոնց արդյունավետ կիրարկումը կարող է օժանդակել ոչ միայն համապատասխան ոլորտում ուսումնասիրություն կատարող տեսաբաններին և հետազոտողներին, այլև քաղաքական գործիչներին ու նրանց հասարակական կերպարը կերտող մասնագետներին: Աշխատանքում առաջարկվող «լռության» բազմագիտակարգային հայեցակերպերը կարող են հաջողությամբ ներդրվել բուհերում դասավանդվող այնպիսի դասընթացներում, ինչպիսիք են լեզվագործաբանությունը, հաղորդակցային լեզվաբանությունը, լեզվաքաղաքագիտությունը, ճանաչողական լեզվաբանությունը և այլն: Առաջարկվող մի շարք նոր եզրեր կարող են հետագայում ընդգրկվել համապատասխան մասնագիտական բառարաններում և հաջողությամբ շրջանառվել լեզվաբանական տեսական և գործնական գրականության մեջ:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության մեջ վերլուծություն կատարելիս գործածվել են նկարագրական և վիճակագրական մեթոդները, որոնց միջոցով ստացված տվյալները համակարգվել և ներկայացվել են հավելվածի

համապատասխան աղյուսակներում: Քաղաքական ելույթներն ու կատարողական ակտերն ուսումնասիրելիս կիրառվել են նաև նշանագիտական, իմաստաբանական, շարահյուսական և գործաբանական մեթոդներ:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, աղյուսակներ պարունակող հավելվածից և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ համառոտ շարադրվել է հարցի պատմությունը: Անդրադարձ է եղել այն հեղինակներին, որոնք ուսումնասիրել են «լռություն» ֆենոմենը, և որոնց աշխատանքները հիմք են ծառայել մեր ատենախոսության համար: Ներկայացվել են նաև աշխատանքի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև այն մեթոդները, որոնց օգնությամբ փորձ է արվել հասնել նախանշված նպատակներին ու լուծել առաջադրված խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: «ԼՌՈՒԹՅԱՆ» ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ՓՈՒԼԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

«Մարդակենտրոն հարացույցի փուլարկումը լեզվաբանության մեջ» վերտառությամբ առաջին ենթագլխում ներկայացվում են լեզվաբանական մի շարք միջգիտակարգերի զարգացման ծիրում դրսևորված այն միտումները, որոնք ի վերջո հանգեցրին մարդակենտրոն հարացույցի ձևավորմանը: Ըստ երևույթին, լեզուների ուսումնասիրություններում նկատվող ներգրավող (ինտեգրացիոն) միտումներով պայմանավորված՝ Ե. Ս. Կուբրյակովան լեզվաբանության ներկայիս կարգավիճակը բնութագրում է որպես բազմահարացուցային[1]: Չհամաձայնելով նրա, ինչպես նաև նրան

[1] Տե՛ս Кубрякова Е. С., Эволюция лингвистических идей во второй половине XX века (опыт парадигмального анализа) // Л.Н.Чурилина (сост.), Актуальные проблемы современной лингвистики, Москва, изд. «Флинта», «Наука», 2008, էջ 59:

համակարծիք մի շարք տեսաբանների հետ՝ Վ. Ա. Մասլովան առաջարկում է «մարդակենտրոն հարացույց» անվանումը՝ իր տեսակետը հիմնավորելով այն փաստարկմամբ, որ առաջարկված եզրը «հնարավորություն է տալիս ընդգրկելու ոչ միայն ճանաչողական լեզվաբանությունը, այլև լեզվամշակութաբանությունը, հաղորդակցային լեզվաբանությունը, էթնոլեզվաբանությունը, որոնց կենտրոնում նույնպես մարդն է»[2]: Թեև մենք չենք փորձում վերջնական տարբերակ առաջարկել, սակայն կարծում ենք, որ արդի լեզվաբանության մեջ մարդակենտրոն միտումներն առնվազն խիստնկատելի են:

«Լռություն» ֆենոմենի վերաբերյալ հիմնական տեսական մոտեցումները շարադրված են հաջորդ ենթագլխում՝ վերնագրված ««Լռության» լեզվագործաբանական ուսումնասիրությունների ծավալումը մարդակենտրոն հարացույցի առանցքում»: Այստեղ փորձ է արվում ցույց տալու, թե ինչպես սկզբնական շրջանում տեսաբանների՝ «լռություն» ֆենոմենին առնչվող հիմանականում լեզվափիլիսոփայական, էթնոլեզվաբանական և հոգելեզվաբական ուղղվածությամբ աշխատանքները հետագայում համալրվեցին լեզվագործաբանական ուսումնասիրություններով, որոնց շարքում աչքի են ընկնում Դ. Դյուզի, Ա. Յավորսկու, Կ. Ա. Բոգդանովի և այլոց ծավալուն անդրադարձները:

2000-ական թվականներից «լռություն» ֆենոմենի նկատմամբ հարաճուն հետաքրքրությունը շարունակվում է այնպիսի

[2] Տե՛ս Маслова В. А., Современные направления в лингвистике, Москва, Academia, 2008, էջ 10:

գիտակարգերում և լեզվաբանական միջգիտակարգերում, ինչպիսիք են նշանագիտությունը[3], միջմշակութային հաղորդակցությունը[4], լեզվի փիլիսոփայությունը[5], գենդերային լեզվաբանությունը[6], քաղաքական խոսույթը[7], միջազգային հարաբերությունների տեսությունը[8] և այլն:

Երրորդ ենթագլխում՝ «Լռելու և լռության գործառույթների տարբերակումը», անդրադարձել ենք դրանց գործառույթների տարորոշմանն առնչվող խնդիրներին՝ հիմք ընդունելով դրանցում հաղորդակցային դիտավորության առկայության/բացակայության հանգամանքը: Համեմատել ենք խնդրո առարկայի գործառույթների վերաբերյալ առկա մի շարք տեսական մոտեցումներ՝ ցույց տալով հաղորդակցային տիրույթում դրանց սահմանների խստորոշման անհրաժեշտությունը:

Վերջին ենթագլխում՝ ««Լռություն» ֆենոմենը՝ ըստ հաղորդողի և հաղորդակցվողի», դիտարկել ենք խնդրո առարկայի ընդհանուր դրսևորումները՝ հաղորդակցության վերոնշյալ մասնակիցների հարաբերությամբ՝ առաջնորդվելով խոսողական ակտերի տեսությունում իլոկուտիվ ուժի վերաբերյալ առկա Ռ. Սըրլի մոտեցմամբ, ըստ որի՝ նախադասության առկայացումը համապատասխան խոսքային իրադրությունում իլոկուտիվ ակտ է, իսկ վերջինս էլ պետք է

[3] Почепцов Г. Г., Семиотика, Москва, «Рефл-бук», Киев, «Ваклер», 2002.
[4] Nakane I., Silence in Intercultural Communication: Perceptions and Performance, Amsterdam / Philadelphia, John Benjamins Publishing Company, 2007.
[5] Бибихин В. В., Язык философии, Санкт-Петербург, Наука, 2007, стр. 29-43.
[6] Брутян Л. Г., Язык и гендер, Ереван, изд-во «Международная академия философии», 2008, стр. 104-105.
[7] Freeden M., Silence in political theory, A conceptual predicament // Journal of Political Ideologies, Vol. 20, N1, 2015, pp. 1–9.
[8] Dingli S., We Need to Talk about Silence, Re-examining Silence in International Relations Theory // European Journal of International Relations, SAGE, 2015, pp. 1-22.

դիտարկել որպես լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր[9]: Այլ կերպ ասած՝ հաղորդակցային մտադրությամբ է պայմանավորված համապատասխան միավորի գոյությունը:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ. ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Սույն գլխում, որը բաղկացած է հինգ ենթագլուխներից («Խոսույթի սահմանմանն առնչվող որոշ տեսական մոտեցումներ», «Քաղաքական խոսույթը որպես լեզվաքաղաքագիտության ուսումնասիրման առարկա», «Լռությունը որպես բազմաշերտ հաղորդակցային նշան քաղաքական խոսույթում», «Ֆիզիկական բռնությունը որպես ոչ խոսքային հաղորդակցության միջոց քաղաքական խոսույթում», «Լռեցնելու լեզվական արտակա միջոցների գենդերային տարբերությունները քաղաքական խոսույթում»), ներկայացվում են խոսույթի և քաղաքական խոսույթի վերաբերյալ առկա առանցքային մի շարք մոտեցումներ: Լեզվագործաբանական գրականության մեջ քաղաքական խոսույթի վերաբերյալ սովորաբար երկու ընդհանուր մոտեցումներ առանձնացնում՝ նեղ և լայն: «Լայն իմաստով այն ընդգրկում է հաղորդակցության այնպիսի ձևեր, որոնցում քաղաքական ոլորտին է վերաբերում առնվազն [խոսույթի] բաղադրիչներից մեկը՝ սուբյեկտը, հասցեատերը կամ հաղորդման բովանդակությունը: Նեղ իմաստով քաղաքական խոսույթը խոսույթի տեսակ է, որի նպատակն է նվաճել, պահպանել և իրականացնել քաղաքական իշխանությունը»[10]:

---

[9] Տե՛ս Серль Дж. Р., Что такое речевой акт? // Новое в зарубежной лингвистике, Вып. 17, Москва, «Прогресс», 1986, էջ 152:

10 Маслова В. А., Современные направления в лингвистике, Москва, Academia, 2008, стр. 219.

Ուղենիշային համարելով այս երկու ընդհանուր մոտեցումները, ատենախոսության առանցքային թեմայի բազմակողմանի քննության նպատակահարմարությունից ելնելով՝ քաղաքական խոսույթը դիտարկել ենք լայն ըմբռնմամբ:

Սույն գլխում անդրադարձել ենք նաև «լռությանը»՝ որպես լեզվամշակութային ոչ խոսքային նշանի՝ ներկայացնելով քաղաքական խոսույթին բնորոշ մի օրինակ, որի ուղերձը բացորոշելու համար կիրառել ենք բազմաշերտ նշանն ապակոդավորելու որոշակի մի մեխանիզմ՝ օգտվելով լռության ակտն իրականացնողի տրամադրած լեզվական բանալի-նշանից, որը հնարավորություն է տալիս բացորոշել նշանային շերտերի և դրանց հենքային վերաբերյալի միջև առկափոխհարաբերությունները:

Որպես այդպիսի բազմաշերտ նշան՝ ուսումնասիրել ենք ռուս ժամանակակից նկարիչ և քաղաքական ակտիվիստ Պ. Ա. Պավլենսկու կատարողական ակտերից մեկը, որի ժամանակ նա կարված բերանով կանգնել էր Պետերբուրգում Կազանյան տաճարի դիմաց՝ ձեռքին պահելով մի պաստառ, որի վրայի գրությունը որոշ առումով մեկնաբանություն էր Pussy Riot ֆեմինիստական ընդդիմադիր ռոք խմբի Մոսկվայի Քրիստոս Փրկիչ տաճարում իրականացրած ակցիայի: Այս օրինակի վրա փորձել ենք ցույց տալ, որ համանման նշանները ոչ միայն բազմաշերտ են, այլև բարդ ու բազմապիսի հարաբերությունների մեջ են ինչպես միմյանց, այնպես էլ իրենց հենքային վերաբերյալի նկատմամբ: Ի դեպ, Պավլենսկու պաստառի վրայի գրությունը դիտարկվել է որպես մի

յուրօրինակ մեկնողական նշան, որը կարծես բանալու դեր է կատարում ակնդրի կամ թիրախային հասցեատիրոջ համար:

Չորրորդ ենթագլխում ցույց է տրվում, որ քաղաքական խոսույթում որպես լռության դրսևորումներ կարելի է երբեմն համարել նաև ֆիզիկական բռնության առանձին դեպքերը, որոնք հաճախ կիրառվում են քաղաքական ընդդիմադիր գործչին կամ ակտիվիստին լռեցնելու նպատակով: Բռնությամբ համոզելու գործառույթը ներկայացվում է հայաստանյան քաղաքական դաշտում վերջերս գրանցված միջադեպով, որի ընթացքում գործածվել է նաև խոսքային ակտ, սակայն այս դեպքում ոչ թե բռնարարքը մեկնաբանելու, այլ ընդհակառակը, ոչ թիրախային հասցեատիրոջից կատարածի իրական ուղերձը կոծկելու նպատակով: Մասնավորապես, բողոքի ցույցից վերադարձող քաղաքական երկու ակտիվիստի ծեծի ենթարկողները չեն թալանել և նույնիսկ խոսքերով չեն սպառնացել նրանց, այլ պարզապես հռետորական մի հարց են ուղղել՝ «Ախպա՞ր եք», որի պատասխանը ամենայն հավանականությամբ նրանց չի հետաքրքրել, քանի որ, բազմիցս բացասական պատասխան լսելով անգամ, որը, ի դեպ, համապատասխանել է ճշմարտությանը, ծեծը չի դադարել: Այս միջադեպը թեև ցավալի երևույթ է, սակայն քաղաքական խոսույթում ոչ խոսքային և լեզվական նշանի համալիր կիրառման առումով ուսումնասիրության հետաքրքիր օրինակ է, երբ նշանային տարբեր համակարգերի պատկանող միավորների միաժամանակ գործածումը մի կողմից ունի տարբեր հասցեատերեր, մյուս կողմից՝ պարունակում է լեզվական և ոչ լեզվական նշաններ, առերևույթ միմյանց հետ

կապ չունեցող ուղերձներ՝ այդ թվում դրսևորելով հաղորդակցային առանձին գործառույթներ:

Վերջին ենթագլուխն առավելապես առնչվում է «լռություն» ֆենոմենի ուսումնասիրմանը գենդերային լեզվաբանության դիտանկյունից: Փորձ է արվել պարզելու, թե Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում որոշակի թեմայի շուրջ ծավալված քննարկումների ժամանակ կին և տղամարդ պատգամավորները որքան հաճախ են կիրառել իրենց գործընկերներին լռեցնելու լեզվական արտակա միջոցները: Ընտրվել է հասարակական արձագանքի առումով համեմատաբար առավել զգայուն թեմայի առնչվող մի օրինագիծ: Երեք օրվա ընթացքում հնչած պատգամավորական ելույթների լեզվագործաբանական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև ելույթ ունեցած տղամարդ պատգամավորների կեսից ավելին (58%) գործածել է լռեցնելու լեզվական արտակա միջոցներ, կին խորհրդարանականների ցուցանիշը համեմատական կարգով նկատելիորեն բարձր է եղել (77%): Ընդ որում, գենդերային երկու խմբերում էլ երկուական պատգամավոր առավել հաճախ են դիմել վերոնշյալ մեթոդին, սակայն այս դեպքում նույնպես կանայք գերազանցել են արական սեռի իրենց գործընկերներին՝ գրեթե երեք անգամ ավելի հաճախ գործածելով համապատասխան միջոցները, որոնցում հաճախ կիրառվել են «հերիք է», «չի կարելի», «ամոթ է» և «չպետք է» հանդիմանական արտահայտությունները:

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ թեև համեմատված արտալեզվական գործոնները (իշխանամետ կամ ընդդիմադիր խմբակցությանը պատկանելը, պատգամավորական փորձը, մանկավարժական կրթությունը և/կամ

դասավանդման փորձը, երեխա(ներ) ունենալու հանգամանքը, տարիքը) ամենայն հավանականությամբ որոշակիորեն ազդել են լռեցնելու միջոցների կիրարկման հաճախականության վրա, սակայն դրանք հիմնականում ընդհանուր ազդեցության բնույթի էին և գենդերային առումով չնշութավորված: Թերևս իրավացի են այն տեսաբանները, որոնք գենդերային հիմնախնդիրների առանցքը համարում են «տղամարդու գերիշխանությամբ հասարակությունում կնոջ զբաղեցրած ստորադաս դիրքը»[11], որն առաջին հայացքից հակասում է հետազոտությունից ստացված այն արդյունքին, որ կին պատգամավորներն առավել հաճախ են դիմում գործընկերներին լեզվական արտակամիջոցներով լռեցնելու կամ նրանց խոսքը սահմանափակելու մեթոդին: Սակայն, մեր կարծիքով, այս հանգամանքը, ընդհակառակը, մեկ անգամ ևս վկայում է, որ կանայք այդ կերպ փորձում են հաղթահարել հասարակության մեջ վաղուց ձևավորված համապատասխան կարծրատիպը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԼՌԵԼՈՒ ԻՄԱՍՏԱՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Սույն գլխում, որը կազմված է երեք ենթագլուխներից («Ստորոգական բաղադրիչների վերլուծությունը որպես ծածկասույթների իմաստաբանական բացորոշման միջոց քաղաքական խոսույթում», «Լռելու շարահյուսական միջոցները Բ. Օբամայի ապրիլքսանչորսյան ուղերձներում», «Բ. Օբամայի ապրիլյան ուղերձներում լռության լեզվագործաբանական վերլուծություն»), անդրադարձ է կատարվում լռելու իմաստաշարահյուսական և լեզվագործաբանական դրսևորման հնարավորությանը:

[11] Holmes J., An Introduction to Sociolinguistics, Harlow, Pearson/Longman, 2008, стр. 309.

Լռությունը դիտարկվում է ոչ թե որպես հաղորդակցային նշան, այլ պարզապես մի երևույթ է, որի պարագայում որոշակի նախադրյալ (պրոպոզիցիա) հաղորդակցային գործընթացում հնչյունային կաղապար չի ստանում, սակայն հաղորդվում կամ թաքցվում է խոսքային այլ միավորների միջոցով:

Համադրելով Լ. Վիտգենշտայնի, Է. Աթայանի, Ջ. Սըրլի և Ա. Յավորսկու հայեցակետերը՝ փորձ է արվում իմաստի բաղադրիչային վերլուծության համաբանությամբ առաջարկել ստորոգական բաղադրիչների վերլուծության մի մոտեցում, որով ասույթը դիտարկվում է հաղորդակցային համապատասխան իրադրության հետանմիջական կապի մեջ:

Է. Ռ. Աթայանի ձևակերպմամբ՝ «լեզվում եղած ամեն բան, ակնհայտկամ թաքուն, ուղիղ կամ անուղղակի ձևով «ասվում է» ամեն բանի մասին, ուստի առնվազն ինքնին (ներքնորեն) ստորոգական է»[12]: Ստացվում է, որ յուրաքանչյուր բառ կամ բառակապակցություն ներունակորեն ստորոգական որոշակի միավորների ներխտացում է: Բառերը, հատկապես նրանք, որոնք նաև արտահայտում են որոշակի հասկացություն, կամ, ինչպես արդարացիորեն նշում է Յու. Ս. Ստեպանովը, ձգտում են դառնալ հասկացություն[13], իրենց իմաստային դաշտում կարող են պարունակել մի քանի ներունակ ստորոգական շերտեր, որոնցից մեկը համապատասխան իրադրությունում առկայացվում է, Է. Ռ. Աթայանի խոսքով՝ «պայքարում «արևի տակ»՝ մակերեսին, տեղ նվաճելու համար»[14]:

---

[12] Աթայան Է. Ռ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, Երևանի համալ. հրատ., 1981, էջ 212:
[13] Տե՛ս Степанов Ю. С., Основы общего языкознания, Москва, «Просвещение», 1975, էջ 13:
[14] Աթայան Է. Ռ., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, Երևանի համալ. հրատ., 1981, էջ 213:

Այս «պայքարը» առավել հետաքրքրական է, երբ այն դիտարկվում է հաղորդակցային իրադրության լայն համատեքստում: Մեր կարծիքով՝ վերջինի գրեթե բոլոր բաղադրիչները, սկսած ասույթի առանձին միավորներից մինչև հաղորդակցային իրադրության թեմատիկ խորապատկերը, կարելի է դիտարկել հարացուցային և շարակարգային առանցքներով: Մոտեցումը գործնականորեն կիրարկվել է ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի ապրիլքսանչորսյան բոլոր ութ տեքստերի ուսումնասիրության ժամանակ, որոնցում հնչած «Yeghern» հասկացությունը մենք դիտարկում ենք որպես ներունակորեն ստորոգական որոշակի կառույցներ կրող միավոր, որոնցից որևէ մեկի առկայացումը պայմանավորված է հաղորդակցային համապատասխան իրադրության գրեթե բոլոր բաղադրիչներով: Փաստորեն, եթե հաղորդակցային այս իրադրությունում հարացուցային մակարդակով հնարավոր լիներ փորձառական ձևով փոխել հաղորդողին, օրինակ, այնպիսի մեկով, որը շարունակ բարձրաձայնում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտությունը, հնարավոր է, որ հաղորդակցության մյուս բևեռում «եղեռն» բառն ընկալվեր որպես «ցեղասպանություն», այսինքն՝ տեղի ունենար նշված հասկացության ստորոգական շերտերի հերթագայության փոփոխություն դրա առկայացման աստիճանակարգային սանդղակում:

Խնդիրը համակողմանիորեն քննելու նպատակով հաջորդ ենթագլուխներում նույնպես գործնական նյութը ընտրվել է ԱՄՆ նախկին նախագահ Օբամայի ելույթներից, քանի որ, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Տ. Զոլյանը, «Օբամայի մոտ

խուսանավող դիսկուրսը հասնում է իր կատարյալ տեսքին»[15], ուստի այդ տեքստերը հարուստ աղբյուր են համապատասխան խնդրի մասին լռելու նպատակով գործածված լեզվագործաբանական զանազան միջոցների կիրարկման առումով: Այս ցավոտ խնդրին լեզվաճանաչողական համակողմանի անդրադարձ է կատարել նաև Ս. Գասպարյանը 2014թ. հրատարակված մենագրությամբ[16]:

Երկրորդ ենթագլխում փորձ է արվում վերհանելու շարահյուսական այն միջոցները, որոնք գործածվել են ԱՄՆ նախագահի ապրիլյան ելույթներում՝ խուսափելու համար ակնկալվող համապատասխան ուղերձները լեզվականորեն կաղապարելուց: Վերոնշյալ տեքստերում հաշվի են առնվել, մասնավորապես, կրավորական կառույցների գործածության հաճախականությունը, անցողական և անանցողական բայերի համամասնությունը, բայի արժութայնությունը, ասույթի թեմա-ռեմատիկ կառուցվածքում ուղերձի ծավալումը և այլն: Այս տիրույթում առանձնացրած միջոցներից բավականին հետաքրքրական է փոխանցումը (տրանսպոզիցիան), մասնավորապես, Լ. Տենյերի խոսքով, դրա գործառույթային տարատեսակը, երբ անգամ խոսքիմասային փոփոխություն տեղի չի ունենում, ինչպես որ իրականացվել է Բ. Օբամայի տեքստերից մեկում. «Օսմանյան կայսրություն»-ը տեղադրվել է ժամանակի պարագայի դեր կատարող բառակապակցության կաղապարում և դրանով առնվազն առերևույթ, կամ այլ կերպ ասած՝ մակերեսային կառույցում «Ottoman Empire»-ը ազատվել է

[15] Զոլյան Ս. Տ., ԱՄՆ նախագահները Հայոց ցեղասպանության մասին (խուսանավող դիսկուրսի իմաստա-գործաբանական վերլուծություն), Երևան, «Լիմուշ», 2015, էջ 41:
[16] Gasparyan S., The Armenian Genocide, A Linguocognitive Perspective, Yerevan, Yerevan State University press, 2014.

ագենտի գործառույթից: Այն, որ այդ ամբողջ բառակապակցությունը կատարում է ժամանակի պարագայի դեր, կարելի է ստուգել փոխարինման մեթոդով: Պատկերավորության համար որպես օրինակ կարելի է վերցնել Բ. Օբամայի 2009 թ. ապրիլ քսանչորսյան ուղերձից համապատասխան նախադասությունը և «in the final days of the Ottoman Empire» բառակապակցության փոխարեն գործածել «in 1915» ձևակերպումը. Each year we pose to remember the 1.5 million Armeninans who were subsequently massacred or marched to their death [in 1915]. Մեր կարծիքով՝ սա ևս քերականական մի միջոց է՝ նրբորեն խուսափելու ակնկալվող ասելիքից, որից հմտորեն օգտվում են քաղաքական գործիչները:

Վերջին ենթագլխում անդրադարձել ենք վերոնշյալ ուղերձներում լռության գործաբանական ուսումնասիրմանը՝ հատկապես կանգ առնելով այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ նախագահի կողմից «ցեղասպանություն» եզրը չգործածելը, հնարավոր է, պայմանավորված լինի տվյալ ակտի կատարողական լինելու հանգամանքով, քանի որ տեղեկատվական առումով Բ. Օբամայի կողմից պատմական հայտնի անցքերը ցեղասպանություն որակելը գրեթե արժեք չի ներկայացնում, սակայն կարևորվում է նրա անձի կարգավիճակով: Նույն ենթագլխում խոսել ենք նաև այն մասին, որ «ցեղասպանություն» եզրի փոխարեն «Meds Yeghern» ձևակերպման կիրարկումն ամենայն հավանականությամբ կապված է նաև գերտերության ղեկավարի տեքստերից տարբեր ուղերձներ ակնկալող հասցեատերերին միաժամանակ բավարարելու և, հետևաբար, լռեցնելու դիտավորության հետ: Ուստի կարելի է ասել, որ «ցեղասպանություն» եզրի փոխարեն «Meds Yeghern»-ի

կիրարկումը Բ. Օբամայի դեպքում գործել է՝ միաժամանակ լռեցնելով ուղերձների երկու հիմնական հասցեատերերին՝ հայերին ու թուրքերին. առաջիններից ոմանք հավանաբար բավարարվեցին «Meds Yeghern» ձևակերպմամբ՝ ընկալելով այն որպես «ցեղասպանությանը» համարժեք եզր, իսկ նրանցից ոմանք, ովքեր Հայոց ցեղասպանության ճանաչմանը դեմ էին, թերևս գոհացան այն փաստից, որ Օբաման հմտորեն խուսանավեց իրենց համար այդքան անցանկալի բառից:

Ատենախոսության եզրակացություններն ամփոփված են հետևյալ կետերում.

1. 20-րդ դարի երկրորդ կեսին «լռություն» ֆենոմենի նկատմամբ դրսևորվող հարաճուն հետաքրքրությունը պայմանավորված էր գիտության մեջ ընդհանրապես, իսկ լեզվաբանության մեջ մասնավորապես, մարդակենտրոն հարացույցի փուլարկմամբ:

2. Մի շարք տեսաբանների առաջարկած «լռության» գործառույթներին առնչվող դասակարգումների զուգադրությունը և ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ անհրաժեշտ է տարորոշված մոտեցում դրսևորել քննարկվող ֆենոմենի որոշարկման հարցում՝ խստորոշելով սահմանը «լռության»՝ որպես կամային ակտի և դրա ակամավարքագծային դրսևորումների միջև:

3. Հասցեագրողի և հասցեատիրոջ լռելու ակտերի դասակարգման մեջ կարելի է ընդգրկել նաև լռեցնելու որոշ դրսևորումներ, որոնք կարող են իրականացվել թե՛ հասցեագրողի և թե՛ հասցեատիրոջ կողմից:

4. «Լռության» բազմակողմ դիտարկումը քաղաքական խոսույթում ենթադրում է, որ վերջինի նկատմամբ առկա

մոտեցումներից նպատակահարմար է ընտրել առավել լայնը, որի պարագայում հաշվի են առնվում նաև արտալեզվական գործոնները:

5. Ոչ խոսքային հաղորդակցության պարագայում «լռությունը» քաղաքական խոսույթում կարող է դիտարկվել որպես բազմաշերտ նշան: Համապատասխան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նշանային շերտերը միմյանց և իրենց հենքային վերաբերյալի հետ փոխկապակցված են տարաբնույթ հարաբերություններով:

6. Երբեմն ֆիզիկական բռնությունը՝ խոսքի ուղեկցմամբ կամ առանց դրա, կարող է լռության որոշակի դրսևորում դիտարկվել քաղաքական խոսույթում:

7. Քաղաքական խոսույթում, մասնավորապես խորհրդարանական քննարկումների ժամանակ գենդերային տարբերություն է դրսևորվում լռեցնելու լեզվական արտակա միջոցների կիրառման հաճախականության առումով, որը թերևս պայմանավորված է հասարակության մեջ կանանց նկատմամբ ձևավորված կարծրատիպը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար կոտրելու ձգտմամբ:

9. Տեքստի մակարդակում «լռություն» ֆենոմենը կարելի է ուսումնասիրել լեզվական նյութի ծավալման երեք հարթություններում՝ իմաստային, շարահյուսական և գործաբանական:

10.Ներունակ ստորոգական բաղադրիչների վերլուծությամբ հնարավոր է բացորոշել այն ծածկասույթները, որոնք քաղաքական գործիչը խոսքում փորձում է քողարկել:

11.Շարահյուսական որոշ երևույթներ (թեմատիկ դերերի բաշխումը, կրավորական սեռի, փոխանցման, անանցողական բայերի կիրարկումը) կարող են դիտարկվել որպես ասելիքը լռության մատնելու միջոցներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Այվազյան Ա. Վ., Ֆիզիկական բռնությունը որպես ոչ խոսքային հաղորդակցության միջոց քաղաքական խոսույթում // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Բանասիրություն, Լեզվաբանություն, 1(30)-Երևան, Լինգվա, 2014, էջ 21-29:

2. Այվազյան Ա. Վ., Քաղաքական խոսույթում բառարանային և հանրանշանակ իմաստների տարբերակման հարցի շուրջ (մի բանավեճի օրինակով) // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Բանասիրություն, Լեզվաբանություն, 1(30)-Երևան, Լինգվա, 2014, էջեր 278-286:

3. Այվազյան Ա. Վ., «Լռություն» երևույթը՝ ըստ հաղորդողի և հաղորդակցվողի // Արդի բանասիրության հիմնախնդիրները / ՀՀ ԿԳՆ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և ուրիշ., Երևան, «Վարդան Մկրտչյան Ֆեոդորի», 2015, էջեր 30-36:

4. Այվազյան Ա. Վ., Լեզվաբանության մեջ մարդակենտրոն հարացույցի փուլարկման համառոտ ակնարկ // Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Բանասիրություն, Լեզվաբանություն, 1(36), Երևան, Լինգվա, 2016, էջեր 66-93:

5. Այվազյան Ա. Վ. Ստորոգական բաղադրիչների վերլուծությունը՝ որպես ծածկասույթների բացորոշման միջոց քաղաքական խոսույթում // Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո (ծրագրեր և դրույթներ), Երևան, ԵՊՀ, 2016, էջ 23-24:

6. Ayvayzyan, A. General Tokens of the Phenomenon of Silence in Communicative Process // Когниция, коммуникация, дискурс / Харьковский национальный университет имени В. Н. Каразина, 2016, N12, с. 8-16.

7. Այվազյան Ա. Վ. «Լռելու» և «լռության» գործառույթների տարբերակման հարցի շուրջ //Вестник Российско-Армянского университета, изд., РАУ, Ереван, 2017, N1, с. 189-197:

Андраник Вачаганович Айвазян

ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ПРОЯВЛЕНИЯ ФЕНОМЕНА «МОЛЧАНИЯ» В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ (НА МАТЕРИАЛЕ АНГЛИЙСКОГО И АРМЯНСКОГО)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 - «Общее и сравнительное языкознание»

Защита состоится 05 февраля 2018 года в 15.00 часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Г. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Настоящая диссертация посвящена исследованию молчания как лингвокультурного феномена в политическом дискурсе.

Актуальность диссертации определяется важностью и необходимостью исследования коммуникативных аспектов молчания с точки зрения анализа политического дискурса. Необходимо также различать проявления молчания как неязыкового элемента и многослойной лингвистической единицы.

Научная новизна исследования заключается в попытке объяснить коммуникативные намерения молчания в политическом дискурсе путем введения метода разделения слоев знака и определения отношений между ними, а также в рассмотрении анализируемого явления в трехмерном пространстве, то есть с точки зрения семантики, синтаксиса и прагматики.

Методы исследования включают описательный и статистический анализ явления, а полученные данные представлены в таблицах в приложении. Были применены также семиотические, семантические, синтаксические и прагматические методы анализа политических речей и перформативных актов.

Теоретическая значимость исследования заключается в многоаспектном анализе феномена молчания в трех измерениях

лингвистического материала: семиотическом, семантико-синтаксическом и прагматическом. Предпринята попытка продемонстрировать теоретические основы данного явления в антропоцентрической парадигме, а также возможности его изучения в ряде смежных лингвистических дисциплин.

Практическая ценность диссертации заключается в том, что подходы, разработанные на протяжении всего исследования, могут быть впоследствии применены не только исследователями политического дискурса, но и политиками, а также их имидж-мейкерами. Помимо этого, мультидисциплинарная концепция «молчания», предлагаемая в исследовании, может быть использована в таких академических курсах, как прагматика, коммуникативная лингвистика, политическая лингвистика, когнитивная лингвистика и т.д.

В первой главе делается попытка диахронического представления тех научных тенденций, которые в конечном итоге привели к формированию антропоцентрической парадигмы. Изложены также некоторые основные теоретические подходы к феномену молчания.

Во второй главе «молчание» рассматривается как лингвокультурологический феномен в политическом дискурсе, делается также попытка дать общую характеристику последнего. В следующей части той же главы определяется физическое насилие как коммуникативная единица в политическом дискурсе. В последнем параграфе этой главы рассматриваются гендерные различия с точки зрения применения лингвистических средств с целю заставить замолчать политических противников в парламентском дискурсе.

В третьей главе затрагиваются вопросы семантических, синтаксических и прагматических средств проявления молчания в политическом дискурсе и делается попытка разработать подходы для выявления скрытых сообщений в политических речах и перформативных актах. Вышеупомянутый трехаспектный подход был применен для анализа выступлений бывшего президента США Барака Обамы по вопросу Геноцида армян.

Andranik Vachagan Ayvazyan

LINGUOCULTURAL MANIFESTATIONS OF THE PHENOMENON OF "SILENCE" IN POLITICAL DISCOURSE (ON ENGLISH AND ARMENIAN MATERIAL)

Thesis for the degree of Candidate of Philological Sciences in 10.02.02 – "General and Comparative Linguistics"

The defence will be held on 05 February 2018 at 15:00, at the session of Specialised Council of Linguistics 019 of SCC RA in the Language Institute after H. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich Str. 15)

SUMMARY

The present dissertation is an investigation of silence as a linguocultural phenomenon in political discourse.

The actuality of the dissertation is determined by the importance and necessity of research on the communicative aspects of silence from the perspective of political discourse analysis. There is also a need to distinguish between its manifestations as a non-linguistic element and a multilayered linguistic unit.

The scientific novelty of the research lies in an attempt to explicate the communicative intentions of silence in the political discourse by introducing a method of separating the layers of the sign and determining the relationships between them, as well as by viewing the phenomenon under discussion in the three-dimensional development of the linguistic sign, that is from the perspective of semantics, syntax and pragmatics.

The research methods include descriptive and statistical analysis of the phenomenon, and the obtained data are presented in the tables of the appendix. Certain semiotic, semantic, syntactic and pragmatic methods were also applied to analyze political speeches and performative acts.

The theoretical significance of the research is in the multiaspectual analysis of the phenomenon of silence in three dimensions of the development of linguistic material: semiotic, semantic-syntactic and pragmatic. An attempt is made to demonstrate the theoretical foundations of the phenomenon within the anthropocentric paradigm, as well as the possibilities of studying it in a number of linguistic interdisciplines.

The practical value of the dissertation lies in the fact that the approaches which have been developed throughout the research can be later applied not only by investigators of the political discourse analysis but also by politicians, as well as their image-makers. Besides, the multi-disciplinary conception of "silence" offered in the research can be implemented in such academic courses, as pragmatics, communicative linguistics, political linguistics, cognitive linguistics, and so on.

In the first chapter an attempt is made to diachronically present those scientific trends which ultimately have led to the creation of the anthropocentric paradigm. Some major theoretical approaches to the phenomenon of "silence" are laid out in the same chapter as well.

In the second chapter “silence” is viewed, first, as a linguocultural phenomenon in the political discourse with an attempt to give general characteristics to the latter as well. In the following part of the same chapter physical violence has been taken under discussion as a communicative unit in political discourse. The main focus of the last sub-chapter is gender distinctions in terms of application of linguistic means of silencing political opponents in the parliamentarian discourse.

In the third chapter semantic, syntactic and pragmatic manifestations of silence in political discourse have been touched upon with an attempt to develop an approach to explicate hidden messages of political speeches and performative acts. The above-mentioned three-aspectual approach has been carried out to analyse the speeches of the former US president Barack Obama on the Armenian Genocide.